

**Երևանի Վ. Բոյունովի անվան պետական լեզվաբանական
համալսարանի գիտխորհրդի 2006-2007թթ.**

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

20.12.2006թ. N 3 նիստի

Լսելով և քննարկելով անգլերենի տեսության ամբիոնի վարիչ՝ Զ.Քաչբերունու զեկուցումը ԵրՊԼՀ-ում անգլերենի դասավանդման խնդիրների և զարգացման հեռանկարների վերաբերյալ՝ ԵրՊԼՀ-ի գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. ԵրՊԼՀ-ի անգլերենի, անգլերենի տեսության, անգլերեն 2-րդ մասնագիտություն ամբիոնների աշխատանքը գնահատել բավարար և արձանագրել դրական տեղաշարժեր:

2. Արձանագրել, որ անգլերենի զարգացման ուղղությամբ մինչև օրս պատշաճ աշխատանք է տարվել հետևյալ ուղղություններով.

2.1. Ստեղծվել են դասավանդման նոր պահանջներին համապատասխանող բուհական և դպրոցական դասագրքեր,

2.2. Աշխատանք է տարվել երիտասարդ գիտնականների հետ.

3. կազմակերպվել են հոդվածների քննարկումներ, ամբիոնական սեմինարներ, կլոր սեղաններ,

բ. բարելավվում է ասպիրանտների հետ տարվող աշխատանքը

2.3. Ներմուծվել է մոդուլային համակարգը տեսական առարկաներից

2.4. Մշակվել են հսկման նոր ձևեր, որոնք ենթադրում են ստեղծագործական մոտեցման կիրառում (բանավեճերի, կլոր սեղանների կազմակերպման միջոցով)

2.5. Անգլերենի բաղադրիչն առկա է համալսարանի երկրագիտության, մանկավարժության և օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոններում:

2.6. Սիրակուզի համալսարանի հետ Writing for Democracy and Market Economy ծրագրի շրջանակներում կազմվել են 20 նոր դասընթացներ:

Դրա հետ մեկտեղ կան լուրջ բացթողումներ՝

3. դիպլոմային աշխատանքների գիտական մակարդակի ոչ լիարժեք ապահովումը

3.1. տեսական դասընթացների ոչ արդյունավետ դասավանդումը

3.2. խախտված է հաստիքային և պայմանագրային դասախոսների համամասնությունը

3.3. բացակայում է ամբիոնների միջև գիտական և գիտամանկավարժական անհրաժեշտ կոորդինացումը, իսկ կառուցվածքային առումով չի համապատասխանում պահանջներին

3.4. բացակայում են միջազգային չափանիշներին համապատասխան նոր ծրագրերը

3.5. անբավարար է տեխնիկական միջոցների ներդրումը ուսումնական գործընթացում՝ մասնավորապես զրավոր խոսքի դասընթացներում և «թարգմանչական գործ» մասնագիտության դասընթացում

3.6. բացակայում է դիմորդների և շրջանավարտների շարունակական կրթությունը

4. Ծանձնարարել

4.1. Կրթական բարեփոխումների շարունակականության ապահովման շրջանակներում անգլերենի տեսության և անգլերենը 2-րդ մասնագիտություն ամբիոններին մինչև 2007թ. հունիս ամիսը համապատասխանեցնել 3-րդ կուրսի առարկայական ծրագրերը կրեդիտային համակարգի կրթական պահանջներին:

4.2. Մշակել տեսական առարկաների մոդուլների ընդունման և քննությունների կազմակերպման կարգ՝ ներդնելով կրեդիտային համակարգի Եվրոպական հայեցակարգի մեխանիզմները :

4.3. Կրեդիտային համակարգի ներքո մշակել լեզվաբանություն, բանասիրություն և մանկավարժություն մասնագիտությունների ծրագրեր բակալավրի և մագիստրոսի աստիճանների համար:

4.4. Մշակել «Թարգմանչական գործ» բաժնի նոր առարկաների ծրագրեր և ապահովել դասընթացները տեխնիկական միջոցներով:

4.5. Հանձնարարել անգլերենի ամբիոններին զարգացնել ուսանողի անհատական աշխատանքի ձևերը, ներդնել Եվրոպական հայեցակարգի դասավանդման և գնահատման մեխանիզմները և չափանիշները :

4.6. Մշտական ուշադրության կենտրոնում պահել երիտասարդ դասախոսների գործունեությունը՝ կազմակերպելով միջամբիոնական սեմինարներ, քննարկումներ ու գիտաժողովներ և մշակել համապատասխան չափանիշներ երիտասարդ դասախոսների դասախոսման արդյունքների գնահատման համար :

4.7. Մինչև 2007թ. հունիս ամիսը բարելավել և հրատարակել տեսական դասընթացները, ներկայացնել դրանց էլեկտրոնային տարբերակները, ինչպես նաև մշակել ուսանողի մնացորդային գիտելիքների ստուգման և գնահատման չափանիշները:

4.8. Ակտիվացնել արտալսարանային աշխատանքը՝ համապատասխանեցնելով ծրագրային պահանջներին:

4.9. Ավելացնել կամընտրական և հատուկ դասընթացների կշիռը:

4.10. Բարելավել տեխնիկական միջոցների ներդրումը ուսումնական գործընթացում՝ մասնավորապես գրավոր խոսքի դասընթացներում:

4.11. Ակտիվացնել ամբիոնների հետազոտական կապերն այլ համալսարանների համապատասխան ամբիոնների հետ:

4.12. Փոխարինել երկրորդ կուրսից ընդհանուր բովանդակությամբ գործնական անգլերենի դասընթացները մասնագիտացված և տարբերակված բովանդակության հիման վրա կազմակերպվող դասընթացներով:

4.13. Ակտիվացնել ուսանողների ներգրավվածությունը գիտական աշխատանքներում, մշակել կուրսային և դիպլոմային աշխատանքների կատարումը թիմային տարբերակով:

4.14. Արդիականացնել բուհական դասագրքերը և ապահովել դրանց շարունակելիությունը:

5. Համագործակցելով՝

ա. մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հետ՝ ներդնել անգլերենի դասավանդման նոր մեթոդներ,

բ. մասնագիտացում ապահովող ամբիոնների հետ՝ ստեղծել թեմաների շտեմարան

գ. հայագիտության ամբիոնի հետ՝ համատեղ իրականացնել և ղեկավարել զուգադրական բնույթի գիտահետազոտական աշխատանքներ :

6. Համալրել ամբիոնների ինտերնետային կայքը նոր ծրագրերով առարկայական ուղեցույցներով:

7. Անգլերենի ամբիոններին ֆակուլտետների հետ համատեղ ուսումնական մաս ներկայացնել ամբիոնների կառուցվածքային բարեփոխումների առաջարկներ՝ համապատասխանեցնելով երկաստիճան համակարգի պահանջներին:

8. Հանձնարարել անգլերենի երեք ամբիոններին/անգլերենի, անգլերենի տեսության, անգլերեն 2-րդ մասնագիտություն/ 01.02.2007թ.-ից գիտական, գիտամեթոդական և մրցույթային աշխատանքները իրականացնել համատեղ՝ անգլերենի ամբիոնների դասախոսների մրցույթը տեղափոխելով օտար լեզուների ֆակուլտետ և 2007թ. փետրվար ամսից համակարգողի պարտականությունը դնել անգլերենի տեսության ամբիոնի վրա: իսկ մինչ այդ ներկայացնել առաջարկություններ համակարգման աշխատանքների իրականացման վերաբերյալ:

11. Մինչև 2007թ. մարտ ամիսը ֆակուլտետային խորհուրդներում, անգլերենի ամբիոնների առաջարկությամբ, քննարկել ամբիոնների կառուցվածքային բարեփոխումների վերաբերյալ առաջարկությունները և ներկայացնել համալսարանի գիտական խորհուրդ:

12. Անգլերենի ամբիոնների պայմանագրային և հաստիքային դասախոսների համամասնությունը ապահովելու նպատակով հանձնարարել ուսումնական մասին

Ֆակուլտետների հետ միասին մինչև 2007թ.մայիս ամիսը կազմակերպել նոր մրցույթ՝ լավագույն դասախոսներին մշտական աշխատանքի անցկացնելու համար:

13. Սույն որոշման մասին տեղեկացնել անգլերենի ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմին և կազմակերպել քննարկում որոշման կատարման ընթացքի և դրանից բխող խնդիրների վերաբերյալ, իսկ մինչև .2007թ. մարտ ամիսը այն քննարկել ֆակուլտետների խորհուրդներում:

14. Որոշման կատարման հսկողությունը դնել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի վրա:

Լսելով ԵրՊԼՀ-ի գիտքարտուղար Դ.Ղազարյանի հաղորդումը ԵրՊԼՀ-ի ամբիոնների 2007թ. գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքների պլանների մասին՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել ԵրՊԼՀ-ի ամբիոնների 2007թ. գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքների պլանները:

2. Հանձնարարել ամբիոններին գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքների պլաններում ընդգրկել միջամբիոնական համատեղ թեմաներ:

Լսելով ԵրՊԼՀ-ի գիտքարտուղար Դ.Ղազարյանի հաղորդումը «Լավագույն գիտական աշխատանք» ստուգատես-մրցույթին ներկայացված աշխատանքների վերաբերյալ հարցը՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

«Լավագույն գիտական աշխատանք» ստուգատես-մրցույթի ներկայացված «Неизвестный БрЮсов» կոլեկտիվ մենագրությունը ճանաչել 2006թ. համալսարանի լավագույն գիտական աշխատանքը և պարգևատրել՝

1. Հեղինակներին՝ բաժանելով մրցանակը /75.000 դրամի չափով/ նրանց միջև

2. Խմբագիրներին՝ բաժանելով մրցանակը /75.000 դրամի չափով/ նրանց միջև

Լսելով համալսարանի գիտքարտուղար Դ.Ղազարյանի հաղորդումը «Լավագույն ուսանող, ֆակուլտետ և ակադեմիական խումբ» ստուգատես-մրցույթի հաղթողների պարգևատրման մասին՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել ռեկտորատ 15.12.06թ. հ.15 նիստի որոշումը և

1. Պարգևատրել գավաթով OL ֆակուլտետին որպես լավագույն ֆակուլտետ:

2. Պարգևատրել գրքերով լավագույն ակադեմիական խումբ ճանաչված ԼՍՀ ֆակուլտետի անգլ/երկրագիտություն բաժնի 5-րդ կուրսի 2-րդ խմբի ուսանողներին և գերազանցիկներին պարգևատրել մեկ թոշակի /6.000դր./ չափով:

3. Պարգևատրել գրքերով ամենակազմակերպված խումբ ճանաչված OL ֆակուլտետի ֆրանսերեն/անգլերեն բաժնի 3-րդ կուրսի 2-րդ խմբի ուսանողներին և գերազանցիկներին պարգևատրել մեկ թոշակի /6.000դր./ չափով:

4. Լավագույն ուսանող մրցույթի հաղթողներին՝

1. Գայանե Ռաֆիկի Բարսեղյան – ՕԼՖ, անգլ/իսպ. 5-րդ կուրս /1-ին մրցանակ/ պարգևատրել 40.000 դրամով

2. Լենա Ատոնյան - ՌՕԼՖ, ռուս/անգլ. 5-րդ կուրս /2-րդ մրցանակ/ պարգևատրել 30.000 դրամով

3. Սյուզան Մայիսի Արիստակեսյան - ԼՄՅ, անգլ/երկրագիտ. 5-րդ/3-րդ մրցանակ պարգևատրել 20.000 դրամով:

31. 01. 2007թ. N 4 նիստի

Լսելով և քննարկելով համալսարանի գիտքարտուղար Դ.Ղազարյանի զեկուցումը ԵրՊԼՀ-ի ամբիոնների կողմից 2006թ. իրականացված գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության մասին հարցը՝ ԵրՊԼՀ-ի գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Գնահատել բավարար ԵրՊԼՀ-ի ամբիոնների կողմից 2006թ. իրականացված գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեությունը և շնորհակալություն հայտնել համալսարանի գիտքարտուղար Դ.Ղազարյանին գիտական մասի համակարգված աշխատանքի համար:

2. Արձանագրել՝

2.1. Գիտական և գիտամեթոդական աշխատանքների զգալի աճ՝ համեմատած 2004-2005թթ. հետ:

2.2. Ամբիոնների ակտիվ մասնակցություն ոչ միայն ներհամալսարանական, այլ նաև միջհամալսարանական և արտագնա գիտաժողովներին ու սեմինարներին՝ մասնավորապես ռուս գրականության, արտասահմանյան գրականության, ռուսաց և սլավոնական լեզվաբանության, ֆրանսերենի, ընդհանուր լեզվաբանության և հաղորդակցման տեսության, հայագիտության, մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնների:

Արձագանքելով 2006թ. հանրապետության նշանակալի իրադարձություններին՝ «Հայաստանի տարին ՌԴ-ում և Ֆրանսիայում» ԵրՊԼՀ-ի ամբիոնների ակտիվ մասնակցություն այդ իրադարձությունների շրջանակներում կազմակերպված գիտաժողովներին և սեմինարներին:

2.3. Գրականագիտության և արտասահմանյան գրականության ամբիոնի արդյունավետ աշխատանքը ասպիրանտների և հայցորդների հետ տարվող աշխատանքներում:

2.4. ՈՒԳԸ-ի աշխատանքների ակտիվացում՝ համեմատած նախորդ տարիների:

Դրա հետ մեկտեղ արձանագրել հետևյալ բացթողումները՝

3. Չեն կատարվել 31.01.2006թ. գիտխորհուրդի հ.6 նիստի որոշման ներքոնշյալ հանձնարարակները.

ա/ ապահովել միջամբիոնական համագործակցությունը՝ տարեկան պլաններում ընդգրկելով համատեղ գիտահետազոտական աշխատանքներ,

բ/ ակտիվացնել դրամաշնորհային ծրագրերի իրականացման աշխատանքը,

գ/ ակտիվացնել աշխատանքը ասպիրանտների և հայցորդների հետ:

3.1. Վերջին տարիներին համալսարանը չի ունեցել դոկտորական ատենախոսությունների պաշտպանություն:

Ելնելով վերոնշյալից, ինչպես նաև համալսարանի ռազմավարության ծրագրից բխող միջոցառումների իրականացման նպատակներից՝

4. Հանձնարարել

4. 1. Ամբիոններին վերանայել գիտահետազոտական աշխատանքների տարեկան պլանները՝ այնտեղ ընդգրկելով առնվազն 25% համատեղ իրականացվող թեմաներ:

4.2. Ամբիոններին ներկայացնել առնվազն 1 դրամաշնորհային ծրագիր՝ ներգրավելով այդ աշխատանքում ամբիոնի դասախոսներին:

4.3. Թողարկող ամբիոնների վարիչներին ֆակուլտետային խորհուրդներում ներկայացնել հաշվետվություն ասպիրանտների և հայցորդների հետ տարվող աշխատանքի վերաբերյալ:

Ակտիվացնել նրանց հետ տարվող աշխատանքը՝ ուշադրությունը կենտրոնացնելով ոչ միայն առկա ուսուցմամբ ասպիրանտների, այլ նաև հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների վրա՝ թեկնածուական ատենախոսությունները ժամկետներում պաշտպանելու նպատակով,

4.4. Համարելով դոկտորանտուրան որակավորման բարձրացման կարևոր միջոց՝ ամբիոնների վարիչներին մինչև ս/թ մարտի 10-ը ֆակուլտետային խորհուրդներ ներկայացնել դոկտորանտուրայի հավակնորդների ժամանակացույցը:

5. Ամբիոններին ընդլայնել գիտական համագործակցությունը միջազգային կառույցների հետ՝ կազմակերպելով միջազգային գիտաժողովներ, սեմինարներ, դասախոսություններ, իրականացնելով համատեղ ծրագրեր, գիտական աշխատանքների համատեղ հրատարակումներ միջազգային պարբերականներում:

5.1. Ամբիոններին և ՈւԳԸ-ի նախագահներին մինչև ս/թ փետրվարի 20-ը ներկայացնել առաջարկություններ երիտասարդ գիտնականների, դասախոսների և ուսանողական գիտահետազոտական աշխատանքների խրախուսման ձևերի վերաբերյալ:

5.2 Ամբիոններին մինչև ս/թ մարտի 20-ը գիտական մաս ներկայացնել առաջարկություններ գիտահետազոտական աշխատանքների որակի գնահատման չափանիշների վերաբերյալ:

5.3. Ամբիոններին ամեն տարի մինչև նոյեմբերի 20-ը գիտական մաս ներկայացնել գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության տարեկան լրիվ հաշվետվությունը, իսկ մինչև փետրվարի 15-ը՝ ՈւԳԸ-ի տվյալ տարվա աշխատանքային պլանը:

Սույն որոշման կատարումը դնել ամբիոնների վրա, հսկողությունը՝ համալսարանի գիտքարտուղարի վրա:

Լսելով և քննարկելով Ռուս գրականության ու Գրականագիտության և արտասահմանյան գականության ամբիոնների վարիչներ Ե.Ալեքսանյանի և Ե.Կարաբեգովայի հաղորդումները ԵրՊԼՀ-ում գրականագիտության զարգացման հեռանկարների և խնդիրների մասին՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. ԵրՊԼՀ-ում գրականագիտության խնդիրները երկու ամբիոնների կողմից ոչ ամբողջական ներկայացնելու պատճառով հետաձգել հարցի քննարկումը:
2. Գրականագիտության խնդիրները և զարգացումը համալսարանում քննարկման առարակա դարձնել համատեղ ամբիոնական նիստում, ֆակուլտետային խորհուրդներում:

Լսելով համալսարանի զարգացման գծով պրոռեկտոր Մ.Ավագյանի հաղորդումը Համալսարանի ռազմավարության ծրագրից բխող միջոցառումների քննարկման ժամանակացույցի վերաբերյալ՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել ԵրՊԼՀ-ի ռազմավարության ծրագրի իրականացման գործողությունների պլանների մշակման գործընթացի ժամանակացույցը:

Լսելով համալսարանի զարգացման գծով պրոռեկտոր Մ.Ավագյանի հաղորդումը .2004-2006ուս. տարիների համալսարանի գիտական խորհրդի որոշումների կատարողականի մասին՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Ընդունել ի գիտություն 2004-2006ուս. տարիների համալսարանի գիտական խորհրդի որոշումների կատարողականը ուսումնասիրող աշխատանքային խմբի (Մ.Ավագյանի,

Դ.Ղազարյանի, Գ.Ջալալյանի, Խ.Թևոսյանի մասնակցությամբ) ղեկավար՝ Մ.Ավագյանի հաղորդումը:

1. Վերանայել համալսարանի գիտխորհրդի կանոնակարգը և համապատասխանեցնել գործող օրենսդրությանը /ԲՀՄԿ օրենքին/ և համալսարանի կանոնադրությանը և այն ներկայացնել հաջորդ գիտխորհրդի հաստատմանը:

2. Այսուհետ հստակ նշել գիտական խորհրդի որոշումներով տրվող հանձնարարականների կատարման ժամկետները, իսկ ընթացիկ պարբերական հանձնարարականների դեպքում՝ կատարման միջանկյալ ժամկետները:

3. Բացառել ընդունված որոշումներով ամրագրված հանձնարարականների կրկնությունները և որոշումների կատարման ժամանակ հիմնական շեշտը դնել որակական կողմի վրա:

4. Ամեն ուսումնական տարվա սկզբում անդրադառնալ անցած տարվա որոշումների կատարողականին:

01.03.2007թ. N 5 նիստի

Լսելով համալսարանի ռեկտոր Ս.Ջոլյանի հաղորդումը «Ակոս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր, հասարակական գործիչ, Հայոց Ցեղասպանության ճանաչման գործում նշանակալի ավանդ ներդրած Հրանտ Դինքին Հանրապետության Նախագահի մրցանակին ներկայացնելու վերաբերյալ՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Բնութագրել Հրանտ Դինքին որպես ինքնատիպ, օրինակելի հոգեկերտվածքով, եզակի հայի, ազնիվ, խելացի, վեհ գաղափարների տեր անձնավորության, համարձակ հասարակական գործչի, ով չէր երկնչում Թուրքիայում արտասանել հայերի ցեղասպանությունը բառերը, և ուղղակի վտանգ էր այդ երկրի այն շրջանակների համար ովքեր առ այսօր վարում են ժխտողական քաղաքականություն, ոտնահարում մարդու իրավունքները, ով քաջություն ունեցավ գրել Թուրքիայի և ամբողջ տարածաշրջանի պատմության համար ցավալի ժամանակաշրջանի մասին, մարդ, որի ամենամեծ առաքինությունը եղել է սերը դեպի արդարությունը և մարդասիրության գաղափարներին նվիրվածությունը, որը միշտ մնաց ժողովրդների խաղաղ և բարեկամական հարաբերությունները խաթարող խոչընդոտների վերացման ու այսօր աշխարհի դրոշները դարձած արժեքների իրական կրողը:

2. Բարձր գնահատել «Ակոս» շաբաթաթերթի հիմնադիր և գլխավոր խմբագիր, հասարակական գործիչ Հրանտ Դինքի նշանակալի ներդրումը պատմական արդարության վերականգնման, ժողովուրդների միջև փոխըմբռնման, խոսքի ազատության և մարդու իրավունքների պաշտպանության գործում:

3. Միաձայն հավանության արժանացնել ԵրՊԼՀ-ի ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների և ժողովրդավարության ամբիոնի որոշումը՝ «Ակոս» շաբաթաթերթի հիմնադիր և գլխավոր խմբագիր, հասարակական գործիչ Հրանտ Դինքի թեկնածությունը առաջադրելու ՀՀ Նախագահի մրցանակին նշելով, որ Հրանտ Դինքը հիրավի արժանի է հետմահու ներկայացվելու այդ բարձր և պատվավոր մրցանակին:

Լսելով ԵրՊԼՀ-ի ռեկտոր Ս.Ջոլյանի հաղորդումը Ստրասբուրգում կայացած Եվրախորհրդի լեզվաքաղաքականության կրթական քաղաքականության սկզբունքներին նվիրված ս/թ փետրվար ամսին կայացած ժողովի մասին, որին մասնակցել են ԵրՊԼՀ-ի ռեկտոր Ս.Ջոլյանը և մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ս.Աստվածատրյանը, գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ընդունել ի գիտություն պարոն Ջոլյանի և տիկին Աստվածատրյանի հաղորդումը Եվրախորհրդի լեզվաքաղաքականության հիմնական խնդիրների մասին:

2. Հանձնարարել ամբիոնների մանրամասն ծանոթանալ և քննարկման առարկա դարձնել համալսարանի կայքում տեղադրված փաստաթղթերը՝ նվիրված Եվրոպական կրթական հիմնական ուղղություններին և սկզբունքներին :

Լսելով զարգացման գծով պրոռեկտոր Մ.Ավագյանի զեկուցումը կրթական բարեփոխումների լույսի ներքո 2006-2007թթ. ուս. տարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին՝ ԵրՊԼՀ-ի Գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ի գիտություն ընդունել 2006/2007 ուս. տարվա ձմեռային քննաշրջանի արդյունքների մասին հաղորդումը

2. 2006/2007 ուս. տարվա ձմեռային քննաշրջանի արդյունքները համարել համալսարանի կրթական պահանջները չբավարարող

3. Արձանագրել՝

3.1. 2006/2007 ուս. տարվա ձմեռային քննաշրջանի ընդհանուր առաջադիմության ցածր տոկոսը /57.3%/

3.2. Կրեդիտային համակարգում գտնվող ընդհանուր կրթական առարկաների միջին որակավորման գնահատականի շեմը չապահովող արդյունքը

3.3. ՕԼ և ԼՄՅ ֆակուլտետների Գերմաներեն, իտալերեն մասնագիտական բաժինների, նպատակային ընդունելության ուսանողների, բոլոր ֆակուլտետների 1-ին և 2-րդ կուրսի վճարովի, հատկապես ԱՏ համակարգի ուսանողների ցածր առաջադիմությունը

4. Հանձնարարել համալսարանի բոլոր ֆակուլտետներին՝

4.1. վերլուծել 2006/2007 ուս. տարվա ձմեռային քննաշրջանի արդյունքները ըստ մասնագիտությունների և մասնագիտացումների, տոկոսային վերլուծությունից անցնելով որակական վերլուծության

4.2. հատուկ ուշադրություն դարձնել վերջին տարներին ցածր առաջադիմություն դրսևորող առարկաներին, դարձնել այն ֆակուլտետային խորհրդի քննարկման առարկա

4.3. ուսանողների գիտելիքների վերահսկման ամփոփիչ ձևը համարել ուսուցման մոդուլային համակարգը, նվազագույնի հասցնել քննությունների անցկացումը, ապահովել գիտելիքների գնահատման թափանցիկությունը և ուսանողների վաղաժամկետ իրազեկումը

4.4. ի կատարումն ԵրՊԼՀ գիտական խորհրդի 30,06,2006 որոշման ամբիոնների ներկայացրած թեսթերի հիման վրա անցկացնել ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգում

4.5. առանձնահատուկ ուշադրություն դարձնել ուսումնական գործընթացի կրեդիտավարկանիշային կազմակերպմանը,

5. Հանձնարարել համալսարանի բոլոր ամբիոններին՝

5.1. խորությամբ վերլուծել և բացահայտել ուսումնական գործընթացում տեղ գտած թերությունները, մշտապես քննարկել դասալսումների արդյունքները և առարկաների դասավանդման ընթացքը;

5.2. քննարկել կրեդիտային համակարգում գտնվող 1-ին և 2-րդ կուրսերի առաջադիմությունը, մշակել համապատասխան ծրագրեր ետ մնացող և փորձաշրջում գտնվող ուսանողների համար

5.3. վերանայել մասնագիտական տեսական առարկաների քննությունների կազմակերպման և անցկացման կարգը և սահմանել պատշաճ վերահսկողություն

5.4. պահպանել առարկայական նկարագրերի ուսանողներին ներկայացման ժամկետները և մինչև ս/թ մայիսի 25-ը ներկայացնել 3-րդ կուրսերի առարկայական նկարագրերը

5.5. կրթական բարեփոխումների լույսի ներքո վերանայել առարկայական ուսումնական ծրագրերը՝ դրանք համապատասխանեցնել համալսարանի ռազմավարությունից բխող կոնկրետ խնդիրներին,

5.6. ներդնել կրեդիտային համակարգին, համալսարանի մասնագիտություններին, ուսանողին անհրաժեշտ կարողությունների ու հմտությունների ձեռք բերմանը համապատասխան դասավանդման նոր մեթոդներ

5.7. ուսումնական գործընթաց ներմուծել ուսանողի հետ անհատական աշխատանքի, ինչպես նաև ձեռք բերված գիտելիքների ընթացիկ ստուգման ձևեր

5.8. ակտիվացնել աշխատանքները դասախոսությունների էլեկտրոնային բանկի, բազային դասագրքերի, լրացուցիչ գրականության ստեղծման և համալսարանակն կայքում տեղադրումը

5.9. համակարգչային կենտրոնի հետ համատեղ մշակել ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ կրեդիտային գնահատման համահամալսարանական միացյալ համակարգ, վարկանշային

գնահատմանը զուգահեռ տեղայնացնելով նաև կուլտակային կրեդիտների և ՄՈԳ-ի սանդղակները

6. Հանձնարարել համալսարանի համակարգչային կենտրոնին

6.1. կրթական բարեփոխումների շրջանակներում՝ համալսարանի ամբիոնների հետ համատեղ 2006/07 ուս տարվա 2-րդ կիսամյակից, կրեդիտային գնահատման ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ էլեկտրոնային ձևաչափերը ներդնել ամբիոններ՝ գրանցման, հսկողության և սեփական պատասխանատվության բարձրացման նպատակով

6.2. ստեղծել կրեդիտային համակարգում գտնվող ուսանողների և դասախոսների համագործակցային ներքին ցանց, ուսանողների համալսարանի webկայքի միջոցով ուսումնական գրանցման և էլեկտրոնային փոստի ծառայություններից օգտվելու համակարգ

7. Հանձնարարել համալսարանի ուսումնական մասին

7.1. անցկացնել մոնիթորինգ առարկայական նկարագրերի բովանդակության, ներդրման, կրեդիտային ուսուցման ընթացքի և առկա խնդիրների շուրջ: Մոնիթորինգի արդյունքները զեկուցել համալսարանի ռեկտորատին՝ հաջորդաբար մարտի 25-30-ը, ապրիլի 25-30-ը և մայիսի 25-30 ընկած ժամկետներում

7.2. վերանայել ուսումնական գործընթացը կարգավորող նորմատիվ փաստաթղթերի փաթեթը, հնարավորիս մոտեցնելով այն կրեդիտային համակարգի պահանջներին մշակել ԵրՊԼՀ պրոֆդասախոսական անձնակազմի, ամբիոնի, ֆակուլտետի աշխատանքի գնահատման ռեյտինգային կարգ

8. Սույն որոշման կատարումը դնել համալսարանի ամբիոնների, ֆակուլտետի և ուսումնական մասի վրա, իսկ հսկողությունը համալսարանի զարգացման գծով պրոռեկտորի վրա:

Լսելով զարգացման գծով պրոռեկտոր Մ.Ավագյանի հաղորդումը 2007-2008 ուս.տարվա ընդունելության համար նոր մասնագիտությունների հայտերի մասին՝ ԵրՊԼՀ-ի Գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության կողմից հաստատված մասնագիտությունների նոր ցանկը և էլնելով ԵրՊԼՀ ռազմավորությունից, համալսարանի բարձրագույն կրթության մասնագիտություններ հաստատել ներքոնշյալ մասնագիտությունները ըստ ուղղությունների

Օտար լեզու - մանկավարժության բակալավր/մագիստրոս

Օտար լեզու և գրականություն - բանասիրության բակալավր/մագիստրոս

Լեզվաբանություն - Լեզվաբանության բակալավր/մագիստրոս

Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն - Լեզվաբանության բակալավր/մագիստրոս

Ռուսաց լեզու և գրականություն - մանկավարժության բակալավր/մագիստրոս - բանասիրության բակալավր/մագիստրոս-Լեզվաբանության բակալավր/մագիստրոս

2. Հանձնարարել դեկաններին և ֆակուլտետների խորհրդներին

2.1. կազմել վերոնշյալ մասնագիտությունների բակալավրի կրթական աստիճանի ուսումնական պլանները, ընդգրկելով պարտադիր-հաջորդական, պարտադիր-ոչ հաջորդական և կամընտրական բնույթի դասընթացներ, բեռնաթափելով ներկայիս պլանները 30%-ով;

2.2. մինչև ս/թ մարտի 31-ը ավարտել քննարկումները ամբիոնների հետ, հաստատել ֆակուլտետային խորհրդներում և ներկայացնել համալսարանի ուսումնամեթոդական հանձնաժողով

3. Հանձնարարել համալսարանի ուսումնական մասին

3.1. Մինչև ս/թ ապրիլի 14-ը ֆակուլտետների խորհրդների հավանությանն արժանացած ուսումնական պլանները ներկայացնել համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը

3.2. ֆակուլտետների խորհրդների հետ համատեղ ս/թ ապրիլ ամսից մինչև հուլիսի 10-ը աշխատանքներ ծավալել նույն մասնագիտությունների մագիստրական աստիճանի ուսումնական պլանների և մասնագիտական չափորոշիչների ստեղծման նպատակով և

վերանայել 2002-ին լիցենզավորված ԵրՊԼՀ մասնագիտությունները և դիմել «Լիցենզավորման և հավատագրման գործակալություն» ծառայություն գործընթաց սկսելու նպատակով

3.3 2007/2008 ուսումնական տարվա ժամահաշվարկը 1-ին և 2-րդ կուրսերում իրականացնելի համապատասխան վերոնշյալ մասնագիտական ուսումնական պլանների

4. Հաստատել ՀՀ ԿԳՆ ներկայացված 2007 թվական ԵրՊԼՀ ընդունելության տեղերը ըստ մասնագիտությունների

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել զարգացման գծով պրոռեկտորի վրա:

6. Ուսումնական բարեփոխումների համար ստեղծված հանձնաժողովը և գիտխորհրդին կից ուսումնամեթոդական հանձնաժողովը միացնել և ստեղծել նոր ուսումնամեթոդական հանձնաժողով զարգացման գծով պրոռեկտոր՝ Մ.Ավագյանի նախագահությամբ:

Լսելով ռուս գրականության ամբիոնի վարիչ Ե.Ալեքսանյանի և գրականագիտության և արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Ե.Կարաբեգովայի հաշվետվությունները ամբիոններում կատարված աշխատանքների, խնդիրների և ԵրՊԼՀ-ում գրականագիտության զարգացման հեռանկարների մասին՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ընդունել ի գիտություն ԵրՊԼՀ-ի ռուս գրականության և գրականագիտության և արտասահմանյան գրականության ամբիոնների հաշվետվությունը կատարած աշխատանքների մասին և այն զնահատել բավարար:

Դրա հետ մեկտեղ նշել՝

2. Արդյունավետ չի օգտագործվում ամբիոնների գիտական ներուժը, կան լուրջ բացթողումներ կադրային և ծրագրային խնդիրներում: Հատկապես ճգնաժամային իրավիճակ է ստեղծվել ռուս գրականության ամբիոնում:

2.1 Երկու ամբիոններում բավարար աշխատանք չի տարվում առարկայական ծրագրերի մշակման, ինչպես նաև կրթական համակարգում նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ:

2.2 Ռուս գրականության ամբիոնում չի իրականացվում սերնդափոխությունը, անարդյունավետ է ասպիրանտների հետ տարվող աշխատանքը:

2.3 Ռուս գրականության ամբիոնում ստեղծվել է պրոֆեսորադասախոսական կազմի ծանրաբեռնվածության անհամապատասխանություն նորմատիվային փաստաթղթերին:

2.4 Գրականագիտության և արտասահմանյան գրականության ամբիոնում բացակայում է անհրաշեշտ համագործակցությունը լեզվական ամբիոնների հետ :

2.5 Գրականագիտության և արտասահմանյան գրականության ամբիոնում անբավարար մակարդակի վրա են միջազգային կապերը:

3. Երկու ամբիոններում վերոնշյալ բացթողումները շտկելու և ամբիոնների առջև համալսարանի ռազմավարական ծրագրից բխող խնդիրները լուծելու նպատակով՝

Հանձնարարել

3.1 Երկու ամբիոններին մինչև 2007 թվականի դեկտեմբերը Բոլոնիայի գործընթացի դրույթներին համապատասխան մշակել առարկայական նոր ծրագրեր և վերանայել առկա ծրագրերը՝ ապահովելով վերջիններիս համատեղելիությունը կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի (ECTS) հետ,:

3.2 2007/2008 ուս.տարում Ռուս գրականության, գրականագիտության և արտասահմանյան գրականության ամբիոնների համագործակցությամբ համատեղ քննարկել, մշակել և ֆակուլտետային խորհուրդների հաստատմանը ներկայացնել «Ռուսաց լեզու և գրականություն», «Օտար լեզու և գրականություն» բանասիրության/ այդ թվում «թարգմանչական գործ»/, մանկավարժություն, լեզվաբանություն, միջմշակութային հաղորդակցություն մասնագիտությամբ բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճանն ապահովող ուսումնական պլաններն ու դրանց իրագործման կրեդիտավարկանշային

համակարգը՝ համալսարանի որդեգրած ռազմավարական ծրագրի պահանջներին համապատասխան:

3.3 Մինչև 2008թ. մայիս մշակել մագիստրոսական բոլոր մասնագիտությունների գծով գրականագիտական ցանկալի առարկաների ցանկն ու առարկայական նկարագրերը, աստիճանաբար կենտրոնացնելով հատուկ մասնագիտական դասընթացները բակալավրիատից մագիստրատուրա:

3.4 Երկու ամբիոններին ստեղծել նոր դասագրքեր և ձեռնարկներ, դասախոսությունների էլեկտրոնային տարբերակներ, մշակել և ներդնել ուսուցման նոր մեթոդներ, որոնք հաշվի կառնեն անհատի հետաքրքրություններն ու ունակությունները:

3.5 Երկու ամբիոններին մշակել մոդուլային աշխատանքների և քննությունների անցկացման մեթոդիկա՝ ելնելով առարկայական առանձնահատկություններից, ինչպես նաև հստակեցնել գնահատման համակարգը:

3.6 Ռուս գրականության, գրականագիտության և արտասահմանյան գրականության ամբիոններին ցուցաբերել խստապահանջություն դիպլոմային աշխատանքների թեմաների ընտրության ժամանակ և ապահովել դիպլոմային աշխատանքների գիտական ղեկավարման մակարդակը:

3.7 Ընդլայնել և ավելի բազմաբնույթ դարձնել ուսանողական գիտական ընկերությունների աշխատանքները:

3.8 Ընդլայնել և ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնել ամբիոնների միջազգային կապերը:

3.9 Պլանավորել և իրականացնել որակի ներքին գնահատման աշխատանքներ ուսման որակի բարձրացման և կրթական արդի պահանջներին համապատասխանեցման միջոցառումներ, ուսանողների գործնական և տեսական առարկաների մնացորդային գիտելիքների մակարդակը ստուգելու նպատակով կազմել ամբիոնային առարկաների ծրագրային պահանջները ապահովող հարցաշարեր:

3.10 Ուսումնական մասին վերանայել ռուս գրականության ամբիոնի դասախոսական կազմը համապատասխանեցնել ամբիոնի տարեկան և հեռանկարային ժամահաշվարկին՝ ապահովելով ամբիոնի երիտասարդացումը:

3.11.Երկու ամբիոններին միասին իրականացնել գիտական, գիտամանկավարժական և ուսումնամեթոդական աշխատանքները, իսկ մինչև 2007թ. սեպտեմբեր ամիսը ավարտել ռուս գրականության և գրականագիտություն և արտասահմանյան գրականության ամբիոնների միավորման գործընթացը:

Լսելով և քննարկելով ռեկտորի խորհրդական Գ.Ջալալյանի հաղորդումը ԵրՊԼՀ-ի Գիտական խորհրդի կանոնակարգի նոր խմբագրությամբ նախագծի մասին՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. ԵրՊԼՀ-ի գիտական խորհրդի կանոնակարգում հստակեցնել 38 կետը՝ հաշվի առնելով հասարակական գիտությունների ամբիոնի առաջարկությունը, իսկ ուսանողական խորհրդի երկու առաջարկությունները՝ նույնպես ընդգրկել կանոնակարգի նախագծում՝ 3-րդ առաջարկությունը նպատակահարմար չէ ընդգրկել, հաշվի առնելով օրենքի պահանջը:

2. Լրամշակելուց հետո հաստատել ԵրՊԼՀ-ի գիտական խորհրդի կանոնակարգը:

06.04. 2007թ. N 6 նիստի

1. **Լսելով** ԵրՊԼՀ-ի ռեկտոր **Ս.Ջոլյանի առաջարկությունը** գիտխորհրդի օրակարգի մեջ փոփոխություն մտցնելու վերաբերյալ, գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել գիտխորհրդի օրակարգը առանց առաջին հարցի, քանի որ գերմաներենի և գերմանագիտության դասավանդման խնդիրները ԵրՊԼՀ-ում և զարգացման հեռանկարները հարցը թերի է ներկայացված:

2. **Լսելով և քննարկելով** համալսարանի զարգացման գծով պրոռեկտոր **Ս.Ավագյանի հաղորդումը** ԵրՊԼՀ-ի ռազմավարական ծրագրի /2006-2010թթ./ իրականացման 2007թ. գործողությունների տարեկան պլանի ժամանակացույցի վերաբերյալ՝ ԵրՊԼՀ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել ԵրՊԼՀ-ի ռազմավարական ծրագրի /2006-2010թթ./ իրականացման միջոցառումների պլանը:

2. Հաստատել 2007թ. գործողությունների տարեկան պլանը, իսկ լրացումների և փոփոխությունների դեպքում քննարկումները անցկացնել ֆակուլտետային խորհուրդներում կամ ռեկտորատում:

3. Հանձնարարել համակարգչային բաժնի ղեկավար Վ.Վարդանյանին վերոնշյալ փաստաթղթերից ստեղծել բրոշյուր և այն ուղարկել տպարան հրատարակելու:

3. **Լսելով** համալսարանի գիտքարտուղար **Դ.Ղազարյանի հաղորդումը** ԵրՊԼՀ-ի ամբիոնների 2007թ. գիտական պլանների լրամշակման վերաբերյալ, և քննարկելով 2007թ. հունվարի 31-ին գիտխորհուրդ հ.4 նիստով ամբիոններին տրված հանձնարարականների կատարման մասին տեղեկությունները՝ առանձնակի ուշադրության արժանացնելով միջամբիոնական համագործակցության գործընթացը, գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Գնահատել միջամբիոնական համագործակցության գործընթացը որպես դրական տեղաշարժ՝ համամենատաժ նախորդ տարիների հետ:

1.1 Դրական գնահատել մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի, լեզվաբանության և հաղորդակցման տեսության, հայագիտության, 2-րդ օտար լեզվի , ֆրանսերենի և հասարակական գիտությունների ամբիոնների միջամբիոնական համագործակցությունը:

Դրա հետ մեկտեղ՝

1.2 Արձանագրել, որ միջամբիոնական համագործակցությունը անբավարար է գերմաներենի, անգլերենի, ռուս գրականության, և այն շահագրգիռ ամբիոնների միջև, որտեղ առկա է նշված լեզուների բաղադրիչը /արտ.գրականություն, երկրագիտություն, մանկ և լեզուների դասավանդման մեթոդիկա/:

2. Հավանություն տալ ամբիոնների կողմից ներկայացված դրամաշնորհային ծրագրերի նախագծերին և հանձնարարել ամբիոններին պաշտոնական հայտերը ներկայացնել համապատասխան կառույցներ:

3. Հաստատել դոկտորական ատենախոսությունների վրա աշխատող թեկնածուների ներկայացրած ժամանակացույցը:

3.1 Հանձնարարել ամբիոններին պարբերաբար լսել թեկնածուների հաշվետվությունը կատարած աշխատանքի վերաբերյալ:

4. Հավանության արժանացնել միջազգային կառույցների հետ ամբիոնների համագործակցության ծրագրերը և հսկողություն սահմանել դրանց իրականացման արդյունավետությունը ապահովելու համար:

5. Հավանություն տալ գիտական աշխատանքների որակի գնահատման ներկայացված չափանիշներին և հանձնարարել հրատարակչական-խմբագրական հանձնաժողովներին գիտական աշխատանքները հրատարակման ներկայացնելիս առաջնորդվել ներկայացված չափանիշներով:

23.05. 2007թ N 7. Գիտտի

1. **Լսելով և քննարկելով** համալսարանի ռազմավարության խնդիրների և նպատակների ու Եվրոխորհրդի կոնֆերանսների 2006-2010 թվականների ծրագրերի և ընդունված այլ որոշումների համադրման մասին հարցը՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Շարունակել և ընդլայնել աշխատանքները եվրոպական ժողովրդավարական քաղաքացիության, միջմշակութային հաղորդակցման, լեզվական կրթական քաղաքականության ոլորտներում՝ սերտ համագործակցելով Եվրոխորհրդի համապատասխան կառույցների հետ:

2. Բոլոր լեզվական ամբիոններին, ՅՈՒՆԵՍԿՕ-ի, մանկավարժության և մեթոդիկայի ամբիոնին շարունակել աշխատանքները Եվրոխորհրդի հայեցակարգին (framework), լեզվական պորտֆոլիոյին (language portfolio), ինչպես նաև միջմշակութային հաղորդակցմանը վերաբերող հիմնարար սկզբունքները կիրառելու և տարածելու ուղղությամբ՝ պարտադիր ձևով այն ընդգրկելով ուսումնական ծրագրերում և հարցաշարերում: Պարբերաբար պատրաստել տեղեկատվական նյութեր և վերոգրյալն արտացոլող ձեռնարկներ:

3. ՅՈՒՆԵՍԿՕ-ի և հոգեբանության, հասարակական գիտությունների ամբիոններին ակտիվացնել աշխատանքները և մշակել ուսումնական ծրագրեր եվրոպական ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների, միջմշակութային ուսումնասիրությունների, եվրոպական ինքնության, պատմության և մշակույթի դասավանդմանը վերաբերող ոլորտներին:

4. Ուսումնական մասին, ֆակուլտետների հետ համատեղ, արդիականացնել և Եվրոխորհրդի պահանջներին համապատասխանեցնել մանկավարժների և կրթության պրոֆեսիոնալների պատրաստումը, ակտիվացնել ամբիոնների մասնակցությունը Եվրոխորհրդի Պեստալոցի (Pestalozzi) և ուսուցիչների պատրաստմանը (Teacher Training) վերաբերող այլ ծրագրերում:

5. Ամբիոններին, ֆակուլտետներին և ուսումնական մասին շարունակական աջակցություն ցուցաբերել լեզվի այն մասնագետներին, որոնք կնախաձեռնեն համալսարանի ռազմավարական խնդիրներին և նպատակներին, ինչպես նաև Եվրոխորհրդի 2006-2010 թվ. ծրագրերին և ընդունված այլ փաստաթղթերին համաձայն ծրագրեր մշակել կրթության ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների ոլորտում:

6. Մանկավարժության և մեթոդիկայի ամբիոնին մշակել կրթությանը (Life-long Learning), ինկլուզիվ (ներառական) և հատուկ կրթությանը վերաբերող համալսարանական և արտահամալսարանական ծրագրեր և ռեկտորին ներկայացնել առաջարկներ դրանց՝ ԲՈՒՅ-ում կիրառելու վերաբերյալ:

7. Ամբիոններին և համալսարանի բոլոր ստորաբաժանումներին ուսումնասիրել համալսարանական կառավարման և ուսումնական գործընթացի կազմակերպմանը վերաբերող Եվրոխորհրդի և այլ եվրոպական կառույցների նյութերը և ներկայացնել առաջարկություններ՝ նպատակ ունենալով զարգացնել գործող մեխանիզմների ժողովրդավարացումը, բարձրացնել արդյունավետությունը և ընդլայնել հասարակության հետ կապերը:

8. Ուսանողական խորհրդին առաջարկել ակտիվացնել կապերը եվրոպական ուսանողական կազմակերպությունների և Եվրոխորհրդի երիտասարդության հարցերով դիրեկտորատի հետ, մասնակցել նրանց կողմից կազմակերպվող միջազգային կոնֆերանսներին և Հայաստանում կազմակերպել փորձի փոխանակմանը և տարածմանը նպաստող միջոցառումներ:

9. Համակարգչային կենտրոնին և գրադարանին կազմակերպել Եվրոխորհրդի կոնֆերանսների նյութերի հավաքագրումը և իրականացնել դրանց լուսաբանումը համալսարանի էլեկտրոնային կայքում՝ այդ մասին իրազեկելով համալսարանի բոլոր ստորաբաժանումներին:

10. Հանձնարարել շահագրգիռ ստորաբաժանումներին լուրջ քննարկել սույն որոշումը և որոշման կատարման ընթացքի մասին զեկուցել ուսումնական մաս, իսկ ուսումնական մասին առնվազն երկու ամիսը մեկ անգամ ռեկտորատի նիստերում անդրադառնալ որոշման կատարման ընթացքին:

2. **Լսելով** ԵրՊԼՀ-ում գերմաներենի դասավանդման դրվածքի և զարգացման հեռանկարների մասին գերմաներենի ամբիոնի վարիչի պաշտոնակատար Է.Ղազարյանի զեկուցումը՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հավանություն տալ ներկայացված առաջարկություններին և ծրագրային հիմնադրույթներին:
2. Արձանագրել, որ գերմաներենի զարգացման ուղղությամբ կան դրական տեղաշարժեր հատկապես հետևյալ ուղղություններով.
 - 2.1. Առաջին և երկրորդ կուրսերի գործնական գերմաներենի ծրագրերը և առաջադիմության ստուգումը համապատասխանեցվել է վարկանիշային համակարգին:
 - 2.2. Ստեղծվել են դասավանդման նոր պահանջներին համապատասխան դպրոցական դասագրքեր:
 - 2.3. Ամբիոնում աշխատանքներ են տարվում սերնդափոխության՝ հատկապես երիտասարդ տեսաբան դասախոսների պատրաստման ուղղությամբ: Կազմակերպվում են սեմինարներ ամբիոնի և հրավիրված մասնագետների ուժերով:
 - 2.4. Գերմաներենի բաղադրիչը առկա է 2-րդ օտար լեզվի, երկրագիտության, արտասահմանյան գրականության, մանկավարժության և օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի, լեզվաբանության և հաղորդակցության տեսության ամբիոններում:
 - 2.5. Համագործակցում են գերմանական կազմակերպությունների և գերմանագետների հետ երկրում և երկրից դուրս:
3. Ամբիոնում բավարար մակարդակով չի իրագործվել.
 - 3.1. Տեսական առարկաների դասավանդումն ու առաջադիմության ստուգումը:
 - 3.2. Համագործակցությունը համալսարանի այլ ամբիոնների հետ:
 - 3.3. Գիտամեթոդական աշխատանքները, չի ապահովվել դիպլոմային աշխատանքների գիտական մակարդակը:
4. Ձեկուցման մեջ նշված դրույթներն իրագործելու և նշված թերությունները շտկելու նպատակով հանձնարարել գերմաներենի ամբիոնին.
 - 4.1 Մինչև այս ուսումնական տարվա վերջ վերանայել երրորդ կուրսի առարկայական ծրագրերն ու գնահատման չափանիշները՝ համապատասխանեցնելով կրթական նոր պահանջներին և վարկանիշային համակարգին:
 - 4.2. Տարանջատել բակալավրական և մագիստրական կրթության մասնագիտական առարկաների ցանկը՝ հաշվի առնելով այլ համալսարանների փորձը: Մինչև 2008թ. մայիս ամիսը կազմել ծրագրերն ու մշակել նկարագրերը:
 - 4.3. Կազմել գործնական և տեսական գերմաներենի տարբերակված ծրագրեր՝ հաշվի առնելով մասնագիտացումները: Հատուկ ուշադրություն դարձնել «Թարգմանչական գործ» մասնագիտության ծրագրի վրա: Մշակել ինքնուրույն և անհատական աշխատանքների ձևեր /մինչև 2008թ./:
 - 4.4. Պատրաստել ավագ սերնդին փոխարինող երիտասարդ դասախոսներ՝ հատկապես տեսական դասընթացների գծով:
 - 4.5. Թարմացնել դասախոսությունները՝ շեշտը դնելով ժամանակակից լեզվաբանական մոտեցումների վրա, մշակել դասախոսությունների էլեկտրոնային տարբերակը, տեղադրել ինտերնետային կայքում, պատրաստել տպագրության համար
 - 4.6. Համապատասխանաբար վերանայել կուրսային և դիպլոմային ա՛խատանքների թեմաները՝ ներգրավելով զուգադրական, համեմատական աշխատանքներ:
 - 4.7. Համագործակցել երկրագիտության, լեզվաբանության և հաղորդակցության տեսության, հայերենագիտության, անգլերենի տեսության և մանկավարժության և լեզվի դասավանդման մեթոդիկայի ամբիոնների հետ.

ա/ 2-րդ օտար լեզվի, Յունեսկոյի ժողովրդավարության և Երկրագիտության, գրականագիտության և արտասահմանյան գրականության ամբիոնների հետ միջառարկայական համագործակցությունը ամրապնդելու և խորացնելու նպատակով,
բ/ մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հետ գերմաներենի դասավանդման նոր մեթոդների կիրառման նպատակով,
գ/ հայագիտության ամբիոնի հետ կուրսային և բակալավրական զուգադրական բնույթի գիտահետազոտական աշխատանքներ համատեղ իրականացնելու և ղեկավարելու համար:

Հանձնարարել գերմաներենի ամբիոնին կոորդինացնելու վերոնշյալ ամբիոնների հետ համագործակցության աշխատանքները:

4.8. Կազմել բուհական դասագրքեր՝ հաշվի առնելով լեզուների իմացության համաեվրոպական պահանջները:

4.9. Ակտիվացնել ամբիոնի կապերը այլ համալսարանների հետ՝ Հայաստանում և արտերկրում:

5. Սույն որոշումը և նրա կատարման ընթացքը մինչև 2007թ. սեպտեմբեր ամիսը քննարկել ֆակուլտետային խորհուրդներում:

6. Որոշման կատարման հսկողությունը դնել զարգացման գծով պրոռեկտոր Ս.Ավագյանի վրա:

Լսելով և քննարկելով Լեզվաբանության և միջմշակութային հաղորդակցության ֆակուլտետի ղեկան Հ.Ճանճապանյանի և լեզվական ամբիոնների վարիչների հաղորդումը ԵրՊԼՀ-ի «Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն» ֆակուլտետի «Թարգմանչական գործ» մասնագիտության խնդիրների և ծրագրերի վերաբերյալ՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հանձնարարել օտար լեզուների ամբիոններին

1. օտար լեզուների ամբիոններին ավելի սերտ համագործակցել մասնագիտական ամբիոնների հետ:

2. առարկայական, ծրագրային և մեթոդական խնդիրների համապատասխանեցման և միջամբիոնային համագործակցության ամրապնդման նպատակով մինչև ս/թ հունիսի 1-ը ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմից ստեղծել թարգմանչական գործ մասնագիտության համակարգող խումբ:

3. թարգմանչական գործ մասնագիտության ուսուցման և դասավանդման, որակի բարձրացման նպատակով ամբիոններում դասաբաշխման պարտադիր պայման համարել թարգմանություն դասավանդող դասախոսների մասնագիտական համապատասխանությունը:

4. Ժավալել աշխատանքներ միջազգային կապերի հաստատման ուղղությամբ՝ արտասահմանյան մասնագետների հրավիրման և տեղական մասնագետների արտասահմանում մասնագիտական որակավորման բարձրացման գործուղման նպատակով:

5. տարանջատել բակալավրի և մագիստրոսի աստիճաններին ներկայացվող պահանջները այդ նպատակով:

5.1. մինչև ս/թ հունիսի 10-ը վերանայել թարգմանչական բաժնի ուսումնական պլանը. դասավանդվող առարկաների ցանկը, դրանց հաջորդականությունը:

5.2. կազմել միջազգային չափանիշներին համապատասխան ծրագրեր, մշակել առարկայական նկարագրեր՝ համագործակցելով հայագիտության և ժամանակակից ռուսաց լեզվի ամբիոնների հետ:

5.3. 2007/2008, 2008/2009 ուս. տարիներին ստեղծել թարգմանչական գործ մասնագիտության համար բուհական դասագրքեր, ձեռնարկներ:

5.4. մինչև 2008թ.մշակել «Թարգմանչական գործ» բաժնի նոր առարկաների ծրագրեր և ապահովել դասընթացները տեխնիկական միջոցներով:

6. ՈՒՏՄ բաժնի հետ համատեղ ստեղծել ժամանակակից տեխնիկական միջոցներով հագեցած մշտական գործող լաբորատորիա և առկա տեխնիկական միջոցները փոխարինել ավելի ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխան միջոցներով:

6.1. ձեռք բերել թարգմանչական բաժնի համար ժամանակակից նյութեր և ուսումնական ծրագրեր լաբորատորիայում աշխատելու համար:

7. ակտիվացնել համագործակցությունը թարգմանչական գործ իրականացնող բուհերի հետ՝ Հայաստանում և արտերկրում:

8. վերանայել պրակտիկայի բովանդակությունն ու անցկացման ձևերը, դարձնել այն ավելի նպատակային և 2007 թվականի սեպտեմբերին ներկայացնել միջոցառումների ծրագրեր:

9. ակտիվացնել ամբիոնների հետազոտական կապերն այլ համալսարանների համապատասխան ամբիոնների հետ:

10. Ստեղծել «թարգմանչական գործ» մասնագիտության աշխատանքները համակարգող հանձնաժողով և հանձնաժողովի ղեկավար նշանակել ԼՍՀ ֆակուլտետի ղեկան Հ. Գանճապանյանին:

Սույն որոշման կատարումը դնել ԼՍՀ ֆակուլտետի ղեկանի վրա և մասնագիտական ամբիոնների վրա, հսկողությունը՝ զարգացման գծով պրոռեկտոր Մ.Ավագյանի վրա:

4. Լսելով Ուսումնական պլանների հաստատման վերաբերյալ զարգացման գծով պրոռեկտոր Մ. Ավագյանի հաղորդումը՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Ընդունել ի գիտություն զարգացման գծով պրոռեկտոր Մ. Ավագյանի հաղորդումը և հաստատել Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ուսումնական պլանները:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Լսելով համալսարանի գիտքարտուղար Դ.Ղազարյանի հաղորդումը ԵրՊԼՀ-ի ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և երկրագիտության ամբիոնների կառուցվածքային փոփոխությունների մասին՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ելնելով այն նկատառումից, որ երկու ամբիոնների նպատակները և խնդիրները միասնական են, դրանց արդյունավետ լուծում տալու համար նպատակահարմար է միացնել 2 ամբիոնները /ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների և ժողովրդավարության և երկրագիտության/:

2. Երկու ամբիոնների միացումից հետո նորաստեղծ ամբիոնը անվանել «ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և Եվրոպագիտության ամբիոն»:

3. Հանձնարարել ուսումնական մասին ամբիոնների հետ համատեղ մինչև ս.թ. մայիս ամսվա վերջ համապատասխանեցնել երկու ամբիոնների պրոֆեսորադասախոսական և լաբորանտական անձնակազմերը և ծրագրերը ամբիոնի նպատակներին:

4. ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և Եվրոպագիտության ամբիոնի վարիչի պարտականությունները դնել Վ.Պողոսյանի վրա :

5. Քննարկել և անցնել իր պարտականությունների կատարմանը, նրա ծանրաբեռնվածության մեջ նախատեսելով լրացուցիչ ժամեր ուսման գործընթացի և ամբիոնի ենթակայության տակ գտնվող կենտրոնների աշխատանքների համակարգման համար:

Լսելով համալսարանի գիտքարտուղար **Դ.Ղազարյանին**, որը ներկայացրեց ԵրՊԼՀ-ի «Անգլերեն լեզվի» և «Անգլերենի տեսության» ամբիոնների կառուցվածքային փոփոխությունների մասին՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

- Հավանության արժանացնել 11.05.2007թ. ռեկտորատի հ. 31 նիստի ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և երկրագիտության ամբիոնների, ինչպես նաև Անգլերեն լեզվի և Անգլերենի տեսության ամբիոնների միացման որոշումները և հաստատել:
- Ի կատարումն ԵրՊԼՀ գիտական խորհրդի «ԵրՊԼՀ-ում անգլերենի դասավանդման խնդիրների և զարգացման հեռանկարների վերաբերյալ» 20.12.2006թ. թիվ N 3 որոշման 5.11. կետի՝
 1. Վերակազմավորել ներկայումս գործող անգլերեն լեզվի և անգլերեն լեզվի և տեսության ամբիոնները:
 2. Վերոնշյալ ամբիոնների հենքի վրա ստեղծել
 - ա) անգլերենի հնչյունաբանության և քերականության ամբիոն՝ ընդգրկելով տվյալ ասպեկտների գործնական և տեսական դասընթացները, ինչպես նաև գրավոր խոսքի ուսուցման ու թարգմանչական գործը:
 - բ) անգլերենի հաղորդակցման (բառագիտության և ոճաբանություն) ամբիոն՝ ընդգրկելով ընթերցանության գործնական, ինչպես նաև տեսական դասընթացները:
 3. Անգլերեն լեզվի հնչյունաբանության և քերականության և անգլերեն լեզվի հաղորդակցման ամբիոնների վարիչի ժամանակավոր պարտականությունները դնել ներկայիս անգլերեն լեզվի ամբիոնի վարիչ՝ Ս. Մարգարյանի վրա մինչև ս.թ. հուլիսի 1-ը:
 4. Հանձնարարել ուսումնական մասին
 - ա) կազմակերպել ամբիոնների առարկայական դասընթացների բաշխումը ըստ վերակազմավորված միավորների և վերջնականացնել 2007/2008 ուս.տարվա ժամահաշվարկը:
 - բ) մինչև ս.թ. հունիսի 1-ը հստակեցնել համապատասխան ամբիոնների պրոֆեսորադասախոսական հաստիքացանկը:
 5. Նախկին անգլերեն լեզվի և տեսության ամբիոնի վարիչ՝ Հ. Քաջբերունու պաշտոնավարության ժամկետը լրանալու կապակցությամբ անցնել դոցենտի պարտականություններին մինչև ս.թ. դեկտեմբերի 30-ը և շնորհակալություն հայտնել կատարված աշխատանքի համար:
 6. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել զարգացման գծով պրոռեկտոր՝ Մ. Ավագյանի վրա:

Լսելով ուսումնական մասի վարիչ Ջ. Սողոմոնյանի հաղորդումը Ռեկտորի 1Մ-140, 03.11.2005թ. հրամանով հաստատված «ԵրՊԼՀ ամբիոնի վարիչների ընտրության կարգի» 2-րդ բաժնի 8-րդ կետում փոփոխություններ կատարելու մասին՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

«ԵրՊԼՀ ամբիոնի վարիչների ընտրության կարգի» 2-րդ բաժնի 8-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝
Ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթին մասնակցում են գիտությունների դոկտորի (պրոֆեսորի), գիտությունների թեկնածուի (դոցենտի) գիտական աստիճան (կոչում) ունեցող անձինք:

26.06. 2007թ. N 8 նիստի

1. Լսելով և քննարկելով Համալսարանի զարգացման գծով պրոռեկտոր՝ Մ. Ավագյանի հաղորդումը 2006-2007 ուս. տարվա պետական քննությունների արդյունքների մասին, ԵՊԼՀ-ի գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ի գիտություն ընդունել զարգացման գծով պրոռեկտոր՝ Մ. Ավագյանի հաղորդումը 2006/2007 ուս. տարվա պետական քննությունների արդյունքների մասին:

2. 2006/2007 ուս. տարվա պետական քննությունների արդյունքները համարել բավարար:

3. Նշել պետական քննական հանձնաժողովների նախագահների բարձր գնահատականը անգլերեն, գերմաներեն, «թարգմանչական գործ» մասնագիտության, մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդների, ֆրանսերեն, իտալերեն և անգլերեն որպես 2-րդ մասնագիտություն պետական քննությունների ընթացքում ցուցաբերած բարձր որակի և իմացության վերաբերյալ:

5. Նշել դիպլոմային աշխատանքների կատարման և պաշտպանության գործում տեղ գտած որակական լուրջ տեղաշարժը բոլոր թողարկող ամբիոններում:

6. Համարել թերի կամ ամբողջությամբ չկատարված 04.07.06 թվականի համալսարանի գիտխորհրդի որոշման հետևյալ կետերը՝

Ռուսական և սլավոնական լեզվաբանության ամբիոնում ռուսաց լեզվի տեսական և գործնական առարկաների ուսումնական ծրագրերը, նրանց հատկացված ժամաքանակը, խնդիրներն ու նպատակները լեզուների դասավանդման նորագույն մեթոդների տեսանկյունից դիտարկելուն և նրանց բանավոր և գրավոր խոսքի հմտությունների զարգացմանը:

Ռուս գրականության ամբիոնին վերանայել պետական քննական տոմսերը, վերաձևակերպել ուսանողի ընտրությանը տրվող հարցերը, բացառել ընդգրկված թեմաների անհամաչափությունները:

Անգլերենի տեսության, ֆրանսերենի և գերմաներենի ամբիոնների կողմից վերանայել լեզվաբանություն և միջնակության հաղորդակցություն ֆակուլտետի քննական տոմսերում ընդգրկված մեկնաբանության ենթակա տեքստերը և փոխարինել դրանք տվյալ ֆակուլտետի մասնագիտացումների բովանդակությունն ապահովող տեքստերով:

Հանձնարարել ամբիոններն 04.07.06 թվականի համալսարանի գիտխորհրդի որոշման կատարման վերոհիշյալ թերացումները քննարկել ամբիոններում մինչև ս/թ հուլիսի 10-ը և զեկուցել ձեռնարկված միջոցառումների մասին:

7. Ելնելով պետական քննական հանձնաժողովների նախագահների առաջարկություններից՝ հանձնարարել.

7.1 ռուսական և սլավոնական լեզվաբանության ամբիոնին առանձին քննարկման առարկա դարձնել պետական քննության ժամանակ գրավոր և բանավոր խոսքի հմտությունները տեքստի վերլուծությամբ ստուգելու ուղղությամբ, վերանայել ռուսաց լեզվի տեսական և գործնական առարկաների բակալավրիատի ուսումնական պլանում եղած համամասնությունը դիտարկելով այն՝ գործնական բանավոր և գրավոր խոսքի հմտությունների զարգացման տեսանկյունից, վերանայել պետական քննությունների հարցաշարերը և քննական տոմսերի հարցերը:

7.2 ռուս գրականության ամբիոնին ի ցույց դնել նախորդ որոշումների կատարման անհրաժեշտությունը, համարել անթույլատրելի միմիայն ձևական և մակերեսային փոփոխություններով սահմանափակվելը, արմատական ձևով վերանայել և օպտիմալացնել պետական քննական հարցաշարերը, գնահատման չափանիշ դարձնել ուսանողի նյութի մատուցման վերլուծական հմտությունները:

7.3 Մասնագիտական ամբիոններին և հատկապես անգլերենի հաղորդակցման (բառագիտություն և ոճաբանություն), անգլերենի հնչյունաբանության և քերականության ամբիոններին հատուկ ուշադրություն դարձնել դիպլոմային աշխատանքների պաշտպանության գործընթացի լիարժեք անցկացմանը, բանավեճային տարրերի և գրախոսության բովանդակային ասպեկտների խորացմանը:

• Լեզվական ամբիոններին գործնական առարկայական ծրագրերում ընդգրկել բազմալեզու և բազմամշակույթ հաղորդակցության բաղադրիչը:

• անգլերենի հաղորդակցման (բառագիտություն և ոճաբանություն), ֆրանսերենի և գերմաներենի ամբիոններին վերանայել լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն ֆակուլտետի քննական գործընթացի գրավոր քննության և մեկնաբանության ենթակա տեքստերում հաշվի առնել ֆակուլտետի մասնագիտացումների առանձնահատկությունները:

8. Հանձնարարել ֆակուլտետային խորհուրդներին հատուկ քննարկման առարկա դարձնել դիպլոմային աշխատանքների ղեկավարների և գրախոսների կազմի ընդլայնման հարցը, նրանց մասնակցությունը դիպլոմային աշխատանքների կատարման ընթացքին դարձնել ավելի գործնական:

9. Համարել ոչ լիարժեք քառամյա ուսուցման կուրսային աշխատանքների և ավարտական քննությունների քննարկումները ֆակուլտետներում և թողարկող ամբիոններում: Հանձնարարել ֆակուլտետային խորհուրդներին և թողարկող ամբիոններին մինչև ս.թ. հուլիսի 10-ը համատեղ քննարկել 2007/2008 ուս. տարվա քառամյա ուսուցման շրջանավարտների ավարտական թեզերի, ավարտական ամփոփիչ, ավարտական որակավորման քննությունների կազմակերպման ձևի, բովանդակության ընտրության և անցկացման կարգը: Ուսումնական մաս ներկայացնել առաջարկությունները դրանք ռեկտորատում հաստատելու և 2007/2008 ուս. տարվա ժամահաշվարկում ընդգրկելու նպատակով:

10. Ի կատարումն համալսարանի ռազմավարական ծրագրի աշխատանքներ ծավալել պետական քննական հանձնաժողովներում գործատու կազմակերպությունների ներկայացուցիչներ ընդգրկելու ուղղությամբ:

11. Սույն որոշման կատարումը դնել համալսարանի թողարկող ամբիոնների վարիչների և համապատասխան ֆակուլտետների ղեկանների, իսկ հսկողությունը՝ զարգացման գծով պրոռեկտորի վրա:

2. **Լսելով** ռուսաց և սլավոնական լեզվաբանության ամբիոնի վարիչ **Լ.Մարկոսյանի** հաղորդումը ամբիոնի խնդիրների և հեռանկարային ծրագրի մասին /ի կատարումն համալսարանի գիտխորհրդի 20.12.06թ. հ.2 նիստի որոշման/՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հավանություն տալ ներկայացված առաջարկություններին և ծրագրային հիմնադրույթներին:

2. Արձանագրել, որ ռուսերենի զարգացման ուղղությամբ կան դրական տեղաշարժեր՝ հատկապես հետևյալ ուղղություններով՝

2.1. Առաջին և երկրորդ կուրսերի գործնական ռուսերենի ծրագրերը և առաջադիմության ստուգումը համապատասխանեցվել է վարկանիշային համակարգին:

2.2. Ավարտական փուլում են ռուսաց լեզվի տեսության դասընթացների 2-րդ, 3-րդ, 4-րդ կուրսերի համար:

2.3. Աշխատանքներ են տարվում մագիստրական ծրագրերի կազմման և նկարագրման ուղղությամբ:

2.4. Սլավոնական լեզուների սեկցիայի դասախոսները պատրաստում են ծրագիր և գործնական ձեռնարկ՝ ըստ վարկանիշային համակարգի պահանջների:

2.5. Ամբիոնում աշխատանքներ են տարվում երիտասարդ տեսաբան դասախոսների պատրաստման ուղղությամբ: Կազմակերպվում են սեմինարներ ամբիոնի և հրավիրված մասնագետների ուժերով:

2.6. Համագործակցում են Հայստանի բոլոր բուհերի համապատասխան ամբիոնների հետ, ինչպես նաև ռուսերենն ուսումնասիրող մի շարք օտարերկրյա համալսարանների հետ:

3. Ամբիոնում բավարար մակարդակով չի իրագործվել՝

3.1. Համագործակցությունը համալսարանի այլ ամբիոնների հետ:

3.2. Գիտամեթոդական աշխատանքը. ոչ բոլոր դասախոսներն են մասնակցում գիտաժողովներում:

3.3. Անհրաժեշտ աշխատանքներ չեն տարվում ամբիոնի կայքը թարմացնելու ուղղությամբ:

4. Ձեկուցման մեջ նշված դրույթներն իրագործելու և նշված թերությունները շտկելու նպատակով հանձնարարել ռուսաց և սլավոնական լեզվաբանության ամբիոնին՝

4.1. Մինչև հաջորդ ուսումնական տարվա սկիզբը վերանայել 2-րդ, 3-րդ, 4-րդ կուրսերի առարկայական ծրագրերն և գնահատման չափանիշները՝ համապատասխանեցնելով կրթական նոր պահանջներին՝ ըստ Բոլոնյան համաձայնագրի և Եվրոպական լեզվական հմտությունների:

4.2. Մինչև 2007/08 ուս.տարվա սկիզբը կազմել գործնական ռուսաց լեզվի տարբերակված ծրագրեր LUՅ ֆակուլտետի ուսանողների համար՝ հաշվի առնելով մասնագիտացումները /միջազգային լրագրողներ, քաղաքագետներ, միջազգային տուրիզմ, երկրագիտություն/: Ցուցաբերել տարբերակված մոտեցում ոչ միայն մասնագիտությունների, այլ նաև գնահատման չափանիշների նկատմամբ:

4.3. Հատուկ ուշադրություն դարձնել «Թարգմանչական գործ» մասնագիտության ծրագրի վրա և հսկողություն սահմանել ծրագրի կատարմանը:

2007/08 ուս.տարվա ընթացքում՝

4.4. մշակել հատուկ դասընթացներ մագիստրոսների համար միջմշակութային հաղորդակցման մասնագիտությամբ:

4.5.թարմացնել դասախոսությունները՝ շեշտը դնելով ժամանակակից լեզվաբանական մոտեցումների վրա:

4.6. կազմել ռուսաց և օտար լեզուների համեմատական ուսուցման ծրագիր /OL ֆակուլտետի ուսանողների համար/:

4.7. կազմել հատուկ ծրագրեր արտասահմանցիների համար

4.8 Վերանայել կուրսային և դիպլոմային աշխատանքների թեմաները՝ ներգրավելով զուգադրական, համեմատական աշխատանքների:

4.9. Համագործակցել լեզվաբանության և հաղորդակցության տեսության, հայագիտության, անգլերենի տեսության, երկրորդ օտար լեզվի և գրականագիտության ամբիոնների հետ՝ միջառարկայական համագործակցությունը ամրապնդելու և խորացնելու նպատակով: Հայագիտության և երկրորդ օտար լեզվի ամբիոնների հետ բակալավրական զուգադրական բնույթի գիտահետազոտական աշխատանքներ իրականացնել:

4.10 Համագործակցել մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հետ՝ ռուսաց լեզվի դասավանդման գործընթացում ներդնելով եվրոպական լեզվական թղթապանակը /պորտֆոլիոն/:

4.11 Կազմել բուհական դասագրքեր՝ հաշվի առնելով լեզուների իմացության համաեվրոպական պահանջները:

4.12. Ընդլայնել միջազգային կապերը արտասահմանյան ուսումնական հաստատությունների հետ:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել զարգացման գծով պրոռեկտոր Մ. Ավագյանի վրա:

3. **Լսելով և քննարկելով** համալսարանի գիտքարտուղար Դ.Ղազարյանի հաղորդումը ԵրՊԼՀ-ի հոգեբանության և հասարակական գիտությունների ամբիոնների միացման մասին՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Միացնել հոգեբանության և հասարակական գիտությունների ամբիոնները, նորաստեղծ ամբիոնն անվանել **«Հոգեբանության և հասարակական գիտությունների»** ամբիոն: